

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պատասխանի խանութում

Օտարաբարձարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция. Москва

Խմբագրատանը բաց է առաջօրեան 10-2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարութիւնները ընդունվում են ամեն չեզոքով
Յայտարարութիւնների համար վճարում են
իրաջանելի բանին 2 կոպէկ:

ՄՇԱԿ ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1878 թ.ից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետեւեալ օրերից:

Երազրի դիրքը և պրոգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵՎԿԱՆ ՀԵՌԵՎԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵՍՆՅՈՒ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

ԸՆԴՈՒՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФЛИСЬ Редакция «Мшакъ»:

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Թիւրքիայի հայերի նիւթական գրութիւնը: — Ներքին տեսութիւն: Նամակ Ստամբուլից: Նամակ Վեճեհուլայից: Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւն: Անգլիա: Թիւրքիա, Նամակ Թիւրքիայից: Նամակ Պարսկաստանից: Արտաքին լուրեր: — Մշակութ. հեռագիրներ: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց:

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՆԻՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեր լրագրի 49-որդ համարում տպված էր ռուս «СВЕРН. ВѢСТН.» լրագրից արած քաղաքացիքը, որի մէջ յիշված էին Խորեն արեւզանի խօսքերը Թիւրքիա հրատարակ հայերի մասին: Արեւզանը կարծում է որ այժմ, երբ քրիստոնեայ նահանգների մեծ մասը խլած են Թիւրքիայի ձեռքից, Թիւրքաց տէրութիւնը իր կրած վնասը իրան յետ դարձնելու համար աւելի ծանր հարկեր կը դնէ Հայաստանի վրա: Խորեն եպիսկոպոսի այդ գուշակութիւնը արժանի է ուշադրութեան:

Հատ կարելի է որ Թիւրքիան այդ կանէ, և զորանով կապացուցանէ որ սուլթանի խոստումները հայերին իրանց հաւատարմութեան համար պատերազմի վերջանալուց յետոյ վարձատրելու, — միմիայն ձեւի համար արտասանվեցան և ապագայում, ինչպէս մենք գուշակել էինք, երբեք չը պէտք է իրագործվին:

Չարմանալի ասիական քաղաքականութիւն՝ որքան մի ժողովուրդ հպատակ և հնազանդ է, այնքան տէրութիւնը նրան աւելի

ճշունք է, հալածում է, բռնադատում է: Իսկ եթէ Թիւրքիայի հայերը ապստամբվին բռնիացիների, հերցեգովցիների և բոլզարների պէս, պատերազմի վերջանալուց յետոյ Թիւրքաց տէրութիւնը կը տար նրանց իրաւունքները, կը շորհէր նրանց նոյն արտոնութիւնները, կազատէր նրանց մի բանի տարվայ հարկ վճարելուց, ինչպէս որ վարվում է ապստամբված սլավոն ազգերի հետ: Արեւմ հայերը ոչինչ չը շահվեցան որ չապստամբվեցան: Ինչպէս երևում է ասիական, մոնղոլական տէրութիւնների քաղաքականութեան մէջ հպատակ ազգերը չեն վարձատրվում հնազանդութեան և հաւատարմութեան համար, այլ վարձատրվում են միմիայն ապստամբութեան համար:

Եւ եթէ այժմ Թիւրքիայի հայերը ստանում են քաղաքական իրաւունքներ, — այդ ոչ թէ Թիւրքաց տէրութեան շորհով այդ նրանց հաւատարմութեան համար վարձատրութիւն է, այլ որովհետեւ օտար մի երկիր, Ռուսաստանը, պահանջել է հայերի համար այդ իրաւունքների տալը:

Թիւրքիա հպատակ հայերը ապստամբութեան տեղ ընտրեցին իրանց համար դիպլոմատիական ճանապարհ: Գոնէ պէտք է աշխատեն հաստատ քայլերով մինչև վերջը շարունակել այդ իրանց բռնած ընթացքը, պէտք է ամեն ջանք գործ դնեն այդ ճանապարհի մէջ տեղում չը կանգնել, այլ նոյն

ընթացքով մինչև վերջը տանեն իրանց սկսած գործը: Հաւանական է որ Թիւրքաց տէրութիւնը ոչ թէ միայն չը վարձատրի հայերին իրանց հաւատարմութեան համար, այլ աւելի էլ ծանր և անտանելի հարկեր կը բարձէ նրանց վրա, քան թէ առաջ, որպէս զի արքունի զանձարանի մէջ գոյացած պակասորդը, որ ստացվում էր կորած նահանգներից հաւաքվող հարկերից լրացնէ Հայաստանի աշխատակեր և ոչ ևս ար ժողովրդի վրա կրկնապատիկ հարկեր բարձելով:

Արեւզան Խորենի յայտնած իրաւացի գուշակութիւնը պէտք է անջրի առաջ ունենան կ. Պոլսի հայ գործող անձինք: Հայոց գործի համար Եւրոպա գնացած հայոց պատգամաւորները պէտք է աշխատեն գլխաւորապէս այդ կէտը պարզել եւրոպական կարիքներին և պահանջել մեծ պետութիւններից այդ նշանաւոր տնտեսական խնդրի վերաբերութեամբ պաշտպանել և ազատել հայերին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՍԱՎ ՍՍԱՎՐԱՊՈՒՅ

Մարտի 5
Համաձայն խոստմանս կամեաւ եմ այս համակով քանի մի տեղեկութիւններ հաղորդել բնակիչների մասին: Ստամբուլից ընտանիքներ թուով 25 հազար են, և բազմաթիւ են զխաւորապէս երեք տղաթիւններից՝ ուսանելից, հայերից և հրէաներից: Կան և մի քանի գերմանացի և չեխացի ընտանիքներ: Բոսնիցը, հայերը, հրէաները և գերմանացիք ընդհանրապէս պարապում են վաճառականութեամբ: Այժմ էլ այն վաճառականութիւնը է, որ սրանից մօտ 15-20 տարի առաջ եղած է: Արա մասին, բացի բնակիչներից, վկայում է և տեղին տոնախմբաւոր, որ գտնվում է քաղաքի արեւելեան կողմում: Այստեղ տարին երկու անգամ տօնախմբաւոր է լինում, մէկ գարնանը՝ մայիսին, մէկ էլ աշնանը՝ հոկտեմբերին: Երկու միջոցներում էլ կը տեսնէք բազմաթիւ խանութներ զատարկ մնացած, որ կարծես անցորդին, պատմելով իրանց վառաւոր անցաւը, գանգատվում են ներկայ անաղողութեան վրա՝ Տեղացիք առևտուրի անաղողութեան պատճառը վերաբերում են բառօրվա զարգացման երկարացում, որի հետ Ստամբուլը կարգված չը լինելով այդ տեսակ ճանապարհով հետզհետէ կորցնում է իր նախկին նշանակութիւնը: Մի կողմից այդ ուղի է, որ Ստամբուլը երկաթուղիով կապված չը լինելով թէ վերջինից և թէ Ռուսաստանի այլ և այլ քաղաքների հետ, հետզհետէ կորցնում է իր նշանակութիւնը: Այժմ ժողովրդի լուսատրութեան աստիճանը որոշելու համար, առաջ բերելու ուսումնարանները: Բոսնիցը իբրև թուով ամենից պատասխանողը կորցրէր իր անաղողութեան անջրի առաջ ունենան կ. Պոլսի հայ գործող անձինք: Հայոց գործի համար Եւրոպա գնացած հայոց պատգամաւորները պէտք է աշխատեն գլխաւորապէս այդ կէտը պարզել եւրոպական կարիքներին և պահանջել մեծ պետութիւններից այդ նշանաւոր տնտեսական խնդրի վերաբերութեամբ պաշտպանել և ազատել հայերին:

չատ, ունեն զինակազմ ընթացակարգ բաժանմունքով: Ունեն նմանապէս իրական սեռի զինակազմ, ազատաստարան (пріютъ) աղքատ ու անպաշտան օրիորդների համար, հոգևոր իրական ուսումնարան 4 դասարանից բաղկացած, հոգևոր սովորաբար ժողովրդական և մի արեւելեական ուսումնարան, կան և 10 մասնաւոր ուսումնարաններ: Ունեն տան և երկու եկեղեցի: Կայ մի լուսեղեղական և մի հնօմէական եկեղեցի: Խօսքս մասնաւորապէս կամեաւ եմ առանձին մեր ազգայինների վրա ընդարձակ խօսել «Մշակի» ընթերցողներին ծանօթացնելու համար: Մի ժամանակ Ստամբուլ պոլի հայոց թիւը բաւական նշանաւոր եղած է, բայց ներկայումս համեմատաբար նրա կէտը 50 ընտանիք մնացած է: Հատերը անաղողութեան պատճառով ցրված են զանազան կողմեր: Այստեղի հայերը Եւրոպայից եկած կաթնաբուսականներ են: Սրանց թուով կան թէլալից, Վլադիկի և Վօլգոյից եկած մի քանի ընտանիք, որոնք պարապում են գինեկանութեամբ: Իսկ Նախիջևանից եկած հայերը պարապում են Ռուսաստանի գործարաններից բնութագրած մանուկներին և յիշեցնի առևտուրով: Ունեն մի եկեղեցի, երկուսն ուսումնարան, ուր առայժմ ուսման գործը ինչքան որ անդակ է ընթանում, այնքան էլ նիւթական կողմանէ անապահով վիճակ է ստանում: Ռուսաստանի կամ ազգային մի այլ հաստատութեան անապահով վիճակը նման է աւաղի վրա շինած տանը: Առհասարակ մենք ստանալով ենք նայում ազգային սրբազան հաստատութեանց վրա: Երկուսն ուսումնարանի երկու աղբիւրները պարզէն սպաւված են: Մի աղբիւրը եկեղեցական տան և մի (11) հազար ռուբլու տարեկան 400 ռուբլ տոկոս էր, որ մի տարի առաջ ցամաքած է, այլ ևս ուսումնարանը ստանալու չէ: Եւ անա թէ ինչու վերջինից դրամապիտք 3500 ռուբլը գործ է դրած այժման ժամանակաւոր աղօթատունը շինելու համար, ուր կատարվում է ժամերգութիւնը: Իսկ մնացեալ 7500 ռուբլը հոգևոր իշխանութեան համաձայնութեամբ անցած է Մարգար Պապովեանցի ձեռքը, որ նոր եկեղեցին իր սեփական փողով կառուցանելուց յետոյ, այդ (7500 ռ.) դրամաւը ծախսելու է նրա ներքին կողմերը համար: Երկրորդ աղբիւրը տեղին երբեք գոյութիւն ունեցող բազմաթիւ ընկերութեան վեց հազար (6000) ռուբլու վաճառականական տոկոսն էր, որ դրամապիտքի հետ անհեռատնութեամբ ծախսված լինելով նոյնպէս սպաւված է. բարեկործանական ընկերութիւնն էլ վաղուց դադարած է գործելուց, որովհետ ընկերութեան հիմնադիրը, Ղուկաս Վենձեանցը վախճանած է երկու տարի առաջ: Այստեղ ինչն ըստ ինչեան մի հարց է առաջ գալիս. ուրեմն Ստամբուլից հայ ժողովուրդը ինչ է մտածում և ինչ պէտք է անէ երկուսն ուսումնարանը պահպանելու համար, որի գոյութեան հետ անտարակոյս կապված է և իր գոյութիւնը: Ինչ և իցէ, կը յուսանք, որ ժողովուրդը հասկանալով զպրոցի նշանակութիւնը, ստանութեամբ չի նայի նրա վրա, այլ ինչ որ խորհելու է, կը խորհէ և չուսով կը անօրինէ: Արդէն լուսւմ ենք, որ ժողովուրդը մտադիր է անդամակցութեամբ տարեկան մի որոշեալ դրամար յատկացնել զպրոցի համար, մինչև մի հաստատ աղբիւր գտնելը: Հաստատ աղբիւր լինելու համար էլ, եթէ չը սխալվում, մեծ յոյս կայ: Արդէն Մարգար Պապովեանցը մի քանի անձանց ներկայութեամբ յայտնած է որ նա մտադիր է եկեղեցին շինելուց յետոյ, երկուսն ուսումնարանը ապահովացնել Պ Պապովեանցի իր այդ մտադրութիւնը իրագործելով, մի հիշեցնելու համար յիշատակ թողած կը լինի: Թէև իրան է եկեղեցի շինելու էլ բարի, աստուածահաճոյ գործ է, բայց ուսումնարանը բանաւոր անկախ աստուածահաճոյ և գոյութի գործ է, որ և հայի վրան սեռութիւնը սրտերում անմոռանալի կը մնայ: Առհասարակ ամեն տեղ մեր ուսումնարանների մեծ մասը չունի նիւթական ապահովութիւն: Գրա մասին ոչ ոք չէ մտածում: Հոգևոր իշխանութիւնն էլ իր շանն է սրտում, միայն լքված ցուցալ գտնված իր անաղողութեան իր անաղողութեան մեջ:

